





Ազգարարության Trumpet's Sound Միոռ

53-րդ ՏԱՐԻ, ԿՎԱՏՐԱԼԻԱ

ՆՈՅԵՄԲԵՐ - ԴԵԿԵMBER 2022





Հայ Ավելարանական Եղբայրների Եկեղեցի ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBridge,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱԶԴԱՌԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ» երկամսյա թերքը Սիդնեյի Հայ Ավելարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակություն է: Պատասխանատու խմբագիր՝ հովիվ Հրաչ Գույնեցյան:

Այս թերքը անվճար բաժանվում է հայրենիքում: Ցանկացողները կարող են դիմել նշված հասցենի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սուրբծննդյան ժամանակն էՀովիվ՝ Հրաչ Գույնեցյան

Աստված ընդունման Եգիպտոսի աստվածների (2)Դուռ Սթորմը

Սատկած ագուավըՔաղված

Նվիրվե՞լ, թե՞ ձկնորսության գնալՎեր. Հովսեփ Հովսեփյան

Քրիստոսի վերադարձը, թագավորությունը
և երկրային վերջին դատաստանները (1)QMBC պանորամա

Ծշմարիտ Սուրբ Ծննդնդ.Ջորջ Հանր

Մարգումների ստուգաթերթիկՆեր Բուքման

Խնդրեցնե՞ք հնձի Տիրոջը, որ մշակմեր ուղարկի
իր հնձի համարՎարդան Սարգիսյան

Սուրբծննդյան ժամանակն է

Պահանջ Սուրբ Ծննդյան համարում են խաղալիքների, խրախճանքի, երեկույթների և նվերների առիթ: Բայց իրականում ի՞նչ է բերում Սուրբ Ծննդյանը: Եսայի 9:6-ում կարդում ենք. «Քանզի մեզ համար մի մասուկ ծնվեց, մեզ մի որդի տրվեց. և իշխանությունը նրա ուսերի վրա է լինելու. և նրա անունը կոչվելու է Արանչելի, Խորհրդական, Հզոր Աստված, Հավիտենական Հայր, Խաղաղության Իշխան»:

Փրկիչ է ծնվել: Աստված, մանուկի կերպարանքով ծնվեց Բերքեհեմում: Փրկիչ ծնվեց, որը փրկություն բերեց ողջ մարդկությանը: Աստվածաշնչում կարդում ենք Նրա հրաշքների և ուսմունքի մասին. այս Փրկիչը նույնն է երեկ, այսօր և հավիտյան: Շատերը եկան Նրա մոտ ապաշխարությամբ և նոր կյանք ստացան Քրիստոսում:

Խաղաղության Իշխան: Պարզապես այսօր նայեք ձեր շուրջը: Աշխարհը խառնաշփորի մեջ է: Այն ամենը, ինչ տեսնում ու լսում ենք, ազահության, ատելության և պատերազմի մասին է: Հիսուսի ժամանակներից շատ բան չի փոխվել: Նա եկավ՝ խաղաղություն բերելու մեր սրտերում: Նա խաղաղության Իշխանն է: Եթե չիրավիրեք Նրան՝ ձեր սրտում բնակվելու, երբեք չեք ապրի այն խաղաղությունը, որը Հիսուսով կարող եք ունենալ ձեր կյանքում, սրտում և ընտանիքում:

Արանչելի, Խորհրդական: Եսայի մարգարեի կողմից տրված անունն է: Հիսուսը մեր Խորհրդականն է: Նա միակն է, ով հոգում է, ով հասկանում է, ով օգնում է մեզ, երբ կարիքի մեջ ենք: «Ինձ մո՛տ եկեք, բոլոր հոգնածներ և բեռնավորվածներ, և Ես ձեզ հանգստություն կտամ» (Մատթ. 11:28): Հիսուսը հանգիստ է տալիս անհանգիստ սրտին:

Հավիտենական Հայր: Հիսուսը սկզբից էր, արարչագործության ժամանակից առաջ: Նա է մեզ առաջնորդողը, պաշտպանողը և մեր Հովիվը: Մի օր, երբ հասնենք Երկինք, այս նույն Հիսուսը կլինի մեր Հավիտենական Հայրը: Այն, բոլորս ծնկի կիշնենք ու կերկրպագենք նրան՝ փառաբանելով Նրա սուրբ անունը:

Հ. Գ.

Աստված ընդդեմ Եգիպտոսի աստվածների

Ելից 7-12

Մեր վերջին սերտողությունում սկսեցինք մտածել այն մասին, թե ինչպես Աստված ցույց տվեց Իր գերազանցությունը փարավոնին: Նա ավելի մեծ է, քան Եգիպտոսի աստվածները, նաև նրանց ամենակարևոր աստվածները: Մենք շարունակում ենք Աստծո և փարավոնի միջև բախման մասին պատմությունը՝ տեսնելու Աստծո անվիճելի գերազանցությունը:

3. Մժեղներ

Ահարոնը հարվածեց երկրի փոշուն, և այն մժեղ արձակեց ամբողջ Եգիպտոսում: Սա պատուհաս էր, որն ուղղված էր քրմերի մաքրության համակարգի դեմ: Նրանցից ոչ ոք չէր համարձակվում մոտենալ զոհասեղանին: Այս պատուհասի պատճառով անհնարին դարձավ կատարել իրենց պաշտամունքը:

Այս անգամ կախարդները չկարողացան կրկնել Ահարոնի բերած պատուհասը: Նրանք չկարողացան կյանք ստեղծել և ստիպված էին ընդունել, որ դա «Աստծո մատն է»: Բայց չնայած նրան, որ կախարդներն ասացին, որ սա Աստծո մատն է, փարավոնը չուզեց հավատալ:

4. Շնանաներ

Եվս մեկ անգամ Աստված զգուշացրեց փարավոնին, թե ինչ կլինի, եթե նա չինազանդվի Տիրոջը: Ծանձերն ամենուր կլինեն: Ծանձերի այս պարսերը պեսոք է ցույց տան, որ Բեեղզերուդը՝ նրանց աստվածներից մեկը, անզոր է՝ պաշտպանելու Եգիպտացիներին ծանձերի պատուհասից:

Եգիպտոսի վրա հասած պատուհասը ևս մեկ առանձնահատկություն ուներ. Աստված հայտարարել էր, որ այնտեղ, որտեղ խրայելացիներն են գտնվում, ծանձեր չեն մտնի: Սա ցույց տվեց, թե որքան մեծ է Աստված: Նա ոչ միայն կարող էր սկսել պատուհասը, այլև

կարող էր որոշել, թե որ շրջաններում դա արդյունավետ կլինի:

Այս փոլում թվում էր, թե փարավոնը կզգա: Ակնհայտ է, որ ճանձերի առկայությունը որոշակի ազդեցություն ունեցավ նրա վրա, բայց դա միայն ժամանակավոր էր: Հենց որ ճանձերը քաշվեցին, փարավոնը ևս մեկ անգամ կարծրացրեց իր սիրտը: Սակայն Եգիպտոսի աստվածներից ևս մեկը պարտվեց: Աստված ցույց տվեց, որ Նա ավելի զորեղ է, քան Եգիպտացիների պաշտած աստվածները:

5. Անասունների կոտորած

Սա շատ դաժան պատուհաս էր՝ ուղղված կենդանիների պաշտամունքի ողջ համակարգի դեմ: Տերը սահմանեց այն ժամանակը, երբ իիվանդությունը կհարվածի, այսինքն՝ հաջորդ օրը: Եվ դա եղավ այնպես, ինչպես Մովսեսը զգուշացրել էր փարավոնին:

Եվս մեկ անգամ Տերը հայտարարեց, որ տարբերություն կլինի Իր ժողովրդի և Եգիպտացիների միջև: Այս անգամ փարավոնը մարդկանց ուղարկեց՝ ստուգելու, թե արդյո՞ք դա այդպես է: Մի թե նա չի ինացել, որ Տերը կարող է անել այն ամենը, ինչ ասում է, որ կանի: Ո՛չ, նա դեռևս չէր հասկանում: Մի անգամ էլ փարավոնը կարծրացրեց իր սիրտը:

6. Թարախապալարներ

Մովսեսը մի քուր մոխիր վերցրեց հնոցից, հավանաբար նրանց ծիսական զոհաբերությունների մոխիրը և դեռի երկինքը ցրեց այն: Մոխիրը դարձավ թարախապալարների պատուհաս, որը բռնկվեց մարդկանց և կենդանիների վրա:

Եգիպտացի քրմերն այնքան էին տարված մաքրությամբ, որ երեք օրը մեկ ամբողջությամբ սափրություն էին: Այն ուժեղ հարված էր հասցրել նրանց մաքրության համակարգին: Բայց Եգիպտոսի աստվածները չկարողացան պաշտպանել իրենց ժողովրդին այն հիվանդություններից, որոնք Տերն ուղարկեց նրանց վրա: Տերը կրկին ցույց տվեց Իր գերազանցությունը:

7. Կարկուտ

Աստված տակավին զգուշացնում էր փարավոնին անհնազանդության հետևանքների մասին: Նա ուղարկել էր Իր պատուհասները, որպեսզի փարավոնն ու նրա ժողովուրդը իմանային, որ Իր նմանը չկա: Նա կարող էր մեկնել Իր ձեռքը և փարավոնին ու նրա ժողովուրդին ժանտախտով հարվածել և նրանց հեռացնել երկրից: Բայց կար մի պատճառ, թե ինչո՞ւ Աստված չկործանեց փարավոնին: Նա պետք է ցույց տար փարավոնին Իր զորությունը և հոչակեր Իր անունը ողջ աշխարհում:

Փարավոնը դեռ հպարտանում էր Աստծո ժողովրդի դեմ և թույլ չեր տալիս նրանց գնալ: Բայց Աստված ողորմած էր՝ 24 ժամ առաջ զգուշացնելով Եգիպտացիներին կարկուտի և դրա դաժանության մասին: Նա նոյնիսկ Մովսեսին հանձնարարեց մարդկանց խորհուրդ տալ իրենց ծառաներին ու անասուններին ապաստանի տակ դնել: Ոմանք վախեցան Տիրոջ խոսքից և պատրաստվեցին, իսկ մյուսներն անտեսեցին Նրա խոսքը:

Այս և իններորդ պատուհասների ժամանակ Եգիպտական ամենահզոր աստվածներից երկուար խայտառակվեցին, և ապացուցվեց նրանց անօր լինելը: Խսիսը և Օսիրիսը պետք է վերահսկեին Եղանակը: Բայց մի փուլում, երբ Եգիպտոսում Եղանակը պետք է բարենպաստ լիներ, Աստված փոխեց այն:

8. Մորեխներ

Եգիպտացիները ապավինում էին Սերապիսին՝ մորեխներից պաշտպանելու համար: Բայց նա նոյնամենա չկարողացավ հաղթել խրայելացիների Աստծուն: Սենք նկատում ենք, որ նոյնիսկ փառավոնի ծառաներից ոմանք սկսել էին զիտակցել Աստծո զորությունը և Նրան չհնազանդվելու հետևանքով առաջացած կործանումը: Նրանք աղաչեցին փարավոնին, որ ինչ-որ բան անի:

9. Խավար

Սա արդեն երկրորդ պատուհասն էր, որն ուղղված էր Խսիսի և Օսիրիսի դեմ: Եգիպտացիների երկրի վրա երեք օր խավար տիրեց: Բայց այնտեղ, որտեղ խրայելացիներն էին ապրում, լույս էր: Եգիպ-

տոսի ամենակարևոր աստվածները չեն կարողանում կառավարել ցերեկն ու գիշերը: Այժմ ակնհայտ էր Եգիպտոսի աստվածների բացարձակ անզորությունը: Աստված ցույց տվեց, որ Ինքը գերազանցում է Եգիպտոսի աստվածներին:

Այնուամենայնիվ փարավոնը դեռ հրաժարվում էր խոնարհվել Աստծո առաջ: Նա նույնիսկ ասաց Մովսեսին, որ եթե նորից հայտնը իր առջև, մահապատժի կենքարկվի: Մինչ նա հեռանում էր փարավոնի առջևից, Մովսեսը հայտնեց նրան, որ դաժան դատաստան է սպասվում:

10. Անդրանիկների մահը

Աստված ամեն հնարավորություն տվել էր փարավոնին՝ խոնարհվելու Իր առջև, բայց նա հետևողականորեն հակառակվեց Աստծուն: Եկել էր տասներորդ և վերջին պատուհասի ժամանակը, երբ Աստված դատելու էր փարավոնին. նա կզգար Աստծո բարկությունը, կհասկանար, որ Եհովան գերազանցում է այն աստվածներին, որոնց նա հավատում էր: Ի վերջո նա արձակելու էր իսրայելացիներին:

Մեզ համար այսօր

Մենք պետք է համոզված մնանք մեր Աստծո զորության մեջ: Թեև մեր շրջապատում շատերը կասկածում են Նրա զորության ու իշխանության վերաբերյալ, մենք շարունակում ենք համոզված լինել, որ Նա ամենակարող է և ամենազետ: Այն, ինչ Նա խստացել է անել կկատարի, և մենք կարող ենք բացարձակ վստահություն ունենալ, որ Նա կանի այն, ինչ խստացել է անել:

Մենք կարող ենք նման չինել փարավոնին և այդքան անհարզայից փարվել Աստծո հանդեպ: Բայց արդյոք զիտակցո՞ւմ ենք, որ մեզ համար հեշտ է հակառակվել Տիրոց խնդրանքներին մեր կյանքում: Ով էլ լինենք, Տերն ակնկալում է, որ Իրեն առաջին տեղը տանք մեր կյանքում: Որքա՞ն պատրաստակամ ենք ենթարկվում Նրա պատվիրաններին:

Դոն Սթորմը

Սատկած ագռավը

Մրանից շատ տարիներ առաջ Գերմանիայի Վուրբերթալ քաղաքում ապրում էր աղքատ մի ջուլհակ: Հարևանների կողմից լավ ճանաչված էր որպես բոլոր պարագաներում Տիրոջն ապավիճող հավատացյալ: Նույնիսկ ամենադժվար վիճակներում նա հաստատ հավատով, առանց կասկածելու «Տերը կօգնի» խոսքն էր արտահայտում իր շուրջերից: Նույնիսկ եթե թվար, թե Աստված լրել է նրան, նա դարձյալ առանց կասկածելու ասում էր իր սովորական «Տերը կօգնի» խոսքը:

Սի անգամ նա հենց այդպիսի դժվար կացության մատնվեց: Այդ տարի ամենուրեք անգրծություն էր տիրում և գնալով պակասում էին գործի հնարավորությունները:

Նա աշխատում էր կտորեղենի գործարանում: Գործատերը նրան ազատեց աշխատանքից ուրիշ աշխատակիցների հետ միասին: Նա գործատիրոջը պաղատեց, որ իրեն գործից չհանի, սակայն իզուր աղաչանքները օգուտ չտվեցին: Երբ ջանքերն ապարդյուն եղան, «Տերը կօգնի» ասելով՝ տուն վերադարձավ: Երբ կինը լսեց վատ լուրը, սկսեց դառնորեն լացել: Ամուսինը, ուզելով միխթարել ու քաջալերել իր հուսահատ կնոջը, ինքնավստահ ասաց. «Տերը կօգնի»:

Աղքատությունը օրեցօր ավելի էր նեղում նրանց: Կացությունը գնալով ավելի վատքարանում էր, սակայն ոչինչ չկարողացավ նրան՝ իր Աստծո հանդեա ունեցած հավատից շեղել: Վերջապես հասավ այն օրը, երբ մեկ լումա չէր մնացել իրենց մոտ: Ո՛չ հաց կար և ո՛չ էլ վառելանյութ: Եթե կացությունը այդպես շարունակվեր, սովամահ էին լինելու:

Այդ օրը կինը շատ տխուր էր: Տրտում դեմքով ու տկար մարմնով ավելի հատակը ու կարգի բերեց փոքրիկ բնակարանը: Պատուհանը բաց էր, և հավանաբար, կտավագործի արտասանած խրախուսական խոսքերը դրսում լսվեցին: Որպեսզի Աստծո հանդեա իրենց ունեցած վստահությունը չպակասի ու բարոյական ուժը չնվազի, նա քարձրաձայն գոչեց. «Տերը կօգնի»:

Հենց այդ պահին փողոցային մի տղա լրբորեն ներս նայեց ու քարեպաշտ մարդու ոտքերի մոտ սատկած ազռավ նետելով՝ ասաց.

- «Ա՛ն քեզ ուտելու բան, ո՞վ սուրբ մարդ», - և ծաղրական մի քրքիջ արձակելով՝ հեռացավ:

Մարդը վերցրեց սատկած ազռավին: Սինչ նրա փետուրները փետում էր, այսպես ասաց.

- «Խե՞ղճ արարած, երևի սովից ես սատկել»:

Երբ թոշունի ստամոքսին դիպչեց՝ դրա դատարկ կամ լիքը լինելը հասկանալու համար, կարծի մի բան նկատեց, և ազռավի սատկելու պատճառն իմանալու համար, սկսեց զննել այն: Երբ թոշունի շնչափողը բացեց, մեծ զարմանքով տեսավ ոսկյա մի մանյակ, որն իր ձեռքերի մեջ ընկավ: Կինը ապշահար նրան նայեց, իսկ ամուսինը գորոնուակ սրտով բացականչեց. «Տերը կօգնի»: Մանյակը ձեռքին, նա շտապեց մոտակա ոսկերչի մոտ և պատմեց նրան, թե ինչպես է գտել այն: Նա ուրախությամբ կանխավճար ստացավ և ուտելիք զնեց՝ անմիջական կարիքները հոգալու համար:

Ոսկերիչն անմիջապես սկսեց մաքրել մանյակը և ճանաչեց այն. սրանից առաջ տեսել էր նույն մանյակը: Հանկարծ կանչեց կտավագործին և հարցրեց.

- «Ուզում ե՞ս այս ոսկե մանյակի տիրոջը ճանաչել»:

- «Այո՛», պատասխանեց նա հրճվանքով, - «ուրախությամբ կուզենամ վերադարձնել այն իր իսկական տիրոջը»:

Աստծո ճանապարհներն իրավես սրանչելի են: Երբ ոսկերիչը իր գործատիրոջ անունը արտասանեց, մարդուն հիացմունք պատճառեց պատահած հրաշքը: Փառը տվեց մեծ Աստծուն, ում վստահում է:

Շուտով վերցրեց մանյակը և հանձնեց իր նախկին գործատիրոջը: Նրան նույնպես պատմեց պատահածը: Մանյակի գտնվելու համար նրա ընտանիքը շատ ուրախացավ, որովհետև սպասուիու վրա էին կասկածում՝ կարծելով, թե նա էր գողացել այն: Գործարանատերը ամաչում էր, նաև զգացված էր: Խեղճ մարդուն գործից ազատելու ժամանակ լսած խոսքերը չեր մոռանում: «Այո՛», - ասաց նա մտա-

խոհությամբ ու քաղցրությամբ. «Տերը կօգնի»: Եվ իիմա դու ոչ միայն տուն կվերադառնաս առատորեն վարձատրված, այլև այսուհետ երեք առանց գործի չես մնա: Ես այլևս առանց գործի չեմ թողնի նրան, ում Տերն օգնում է այսքան ակնհայտ կերպով: Դու սրանից հետո որևէ կարոտություն չես ունենա»:

Այն Աստվածը, որ Եղիային ագռավների միջոցով կերակրեց, կառող է փորձության մեջ տառապող Իր զավակների կարիքները հայթայթել նույն թռչունի միջոցով, նույնիսկ եթե նա սատկած է:

Իրական կյանքից վերցված այս եղելությունը կարդալուց հետո մենք ինքնարերաբար պետք է ասենք. «Տե՛ր, մեր հավատը ավելացրո՞ւ» (Ղուկ. 17:5):

Քաղված՝ «Զմայլելի դրվագներ» գրքից

Եթե դուք բարություն ցուցաբերեիք, և մարդիկ ձեզ մեղադրեին գաղտնի անձնական դրդապատճառների մեջ: Ինչեւէ, բարի եղեք:

Եթե հաջողակ եք, ուրեմն կարող եք ունենալ շատ մտացածին ընկերներ և իրական թշնամիներ: Ամեն դեպքում հաջողության հասիք:

Եթե դուք ազնիվ ու շիտակ եք, մարդիկ ձեզ կիսարեն: Ամեն դեպքում անկեղծ եղիր:

Այն, ինչ դուք կառուցել եք տարիներ շարունակ, կարող է ոչնչացվել մեկ գիշերվա ընթացքում: Համենայն դեպս կառուցեք:

Եթե դուք գտնեք անխոռվ երջանկություն, ձեզ կնախանձեն: Ամեն դեպքում երջանիկ եղիր:

Այն լավը, որ դուք արել եք այսօր, վաղը մարդիկ կմոռանան: Ինչեւէ, լավություն արեք:

Մարդկանց հետ կիսեք ձեր ունեցած լավագույնը, և դա երբեք չի հերիքի: Համենայն դեպս կիսեք այն ամենալավը, ինչ ունեք:

Տվեք աշխարհին ձեր ունեցած լավագույնը, և աշխարհը ավելին կիսնդրի: Ամեն դեպքում տվեք ձեր լավագույնը:

Մայր Թերեգա

ՆՎԻՐՎԵ՞Լ, ԹԵ՞ ՃԿՆՈՐՍՈՒԹՅԱՆ ԳՆԱԼ

Հովհ. 21:1-19

Միայն անվերապահ սիրո և հավատի առկայության դեպքում կարող են մարդկային հարաբերությունները հաջող, արդյունավետ և մնայուն լինել: Այսօր առավել, քան երբեմ, հարաբերությունները դարձել են ժամանակավոր, անկանխատեսելի և անհուսալի: Մարդկանց ընկերությունն ու նվիրումը դարձել է պայմանական, հաճախ մանքներից ու զգացմունքներից կախված: Կարճատև հարաբերությունները դարձել են կենսակերպ, նույնը վերաբերում է նաև ամուսինների, ընտանիքի անդամների, ընկերների և նույնիսկ Աստծոն և մարդու միջև եղած հարաբերություններին:

Ճշմարտություն է այն, որ մենք չունենք և չենք կարողանում ձեռք բերել փոխարարաբերությունների համար անհրաժեշտ մաքուր, ոչ եսակենտրոն և անվերապահ սերը: Միայն Աստված կարող է մեզ տալ այդպիսի սեր, որովհետև Աստված Սեր է:

«Եվ մենք ճանաչեցինք ու հավատացինք այն սերը, որ Աստված ունի մեր հանդեպ: Աստված սեր է, և նա, ով սիրո մեջ է ապրում, ապրում է Աստծո մեջ, ու Աստված էլ՝ նրա մեջ» (Ա Հովհ. 4:16):

«Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը, որ Իր միածին Որդուն տվեց, որ ով Նրան հավատա չկորչի, այլ հավիտնական կյանք ունենա» (Հովհ. 3:16):

Աշխարհը չի կարող հասկանալ Հովհ. 21:15-19-ում նկարագրված սերը. Հովհաննեսի ու Պետրոսի զրոյցն այսօր շատ սիսալ է մեկնաբանվում: Հիսուսը հարցնում է. «Սիմոն, դու ինձ սիրո՞ւմ ես սրամացից առավել»: «Այո՛, Տե՛ր, դու գիտես, որ ես սիրում եմ քեզ»:

Հիսուսի հարցը ճիշտ հասկանալու համար մենք պետք է այն ճիշտ համատեքստում դնենք: Հիսուսը երեք տարի անցկացրեց աշակերտների հետ, քարի հովվի նման հոգաց նրանց բոլոր կարիքները, տվեց ամեն քան, այդ թվում՝ նաև Իր կյանքը: Նա խոստում տվեց և պահեց այն, իսկ աշակերտները խախտեցին իրենց խոստումները: Նրանք

խոստացել էին Հիսուսին հետևել մինչև վերջ: Պետրոսը հպարտութեն ասել էր. «Եթե նոյնիսկ բոլորն ընկնեն, ես չեմ ընկնի, եթե նոյնիսկ մեռնելու լինեմ քեզ հետ, երբեք չեմ ուրանա քեզ»: Մի քանի ժամ անց աշակերտներից մեկը մատնեց Հիսուսին, մյուսները շտապեցին իրենց կյանքով ապրելու, իսկ Պետրոսը երեք անգամ ուրացավ Նրան:

Բայց Հիսուսը չդադարեց նրանց սիրելուց: Նա պահեց Իր խոստումը և գնաց նրանց հանդիպելու, նոյնիսկ նախաճաշ պատրաստեց նրանց համար (Հովհ. 21:12):

Հիսուսը նրանց կարգադրել էր ապասել Իրեն և շարունակել իրենց ծառայությունը, բայց նրանք որոշեցին ձկնորսության գնալ: Երբ Հիսուսը նրանց մոտ եկավ, անգամ չնկատեցին Նրան:

Մի՞թե զարմանալի է, որ Հիսուսը նոյն հարցը երեք անգամ տվեց Պետրոսին. «Սիմոն, դու սիրո՞ւմ ես ինձ սրանցից առավել»: Երբ ամեն անգամ Պետրոսն ասում էր. «Այո՛, Տե՛ր, սիրում եմ», Հիսուսը նրան հիշեցնում էր, որ պետք է գործի դնել սերը:

Այսօր Հիսուսը մեզ նոյն հարցն է տալիս. «Սիրո՞ւմ ես ինձ սրանցից առավել»: Դու ամենքից և ամեն ինչից առավել սիրո՞ւմ ես Աստծուն և Նրա Որդուն: Եթե սիրում ես, ապա Պետրոսին ուղղված նրա վերջին պատվերը քեզ էլ է ուղղված. «Հետևի՛ր ինձ»:

Վեր.՝ Հովսեփի Հովսեփյան

**«Այսօր ձեզ համար Փրկիչ ծնվեց Դավիթի քաղաքում,
որը՝ Քրիստոս Տերն է:»**

**Եվ սա՛ ձեզ համար նշան կլինի. Մանուկին կգտնեք խանձարուրով
պատված և մսուրում պլառկած»:**

**Եվ հանկարծակի, այդ հրեշտակին միացավ երկնավոր զորքի մի
բազմություն, որ օրհնում էր Աստծուն՝ ասելով.**

**«Բարձունքներում Աստծուն փառք և երկրի վրա խաղաղություն,
մարդկանց մեջ՝ հաճություն»»:**

Ղուկ. 2:11-14

Քրիստոսի վերադարձը, թագավորությունը և երկրային վերջին դատաստանները (1)

1. Ներածություն

Վաղուց մարգարեները կանխագուշակել էին Բարելոնի կործանումը: Եսային գրել է. «Եվ Բարելոնը՝ քագավորությունների փառքը, քաղեացինների փառահեղության զարդը, Սոլոմին ու Գոմորին է նմանվելու» (Եսայի 13:19): Երեմիան գրել է. «Բարելոնի լայն պարհապնդերը հիմնահատակ պիտի լինեն, և նրա բարձր դրությունը կրակով պիտի այրվեն» (Երեմ. 51:58): Մենք հավատում ենք, որ հին Բարելոնի վերաբերյալ մարգարենությունները կատարվել են մ.թ.ա. 538 թ.-ին կամ սրանից կարճ ժամանակ անց:

Մենք առաջ քաշեցինք այն միտքը, որ Հայտնության գրքի Բարելոնը (Հայտ. 14:8, 16:19, 17:5, 18:2, 10, 21) այն հնագույն քաղաքը չէ, որը վերակառուցվել է (ինչպես ոմանք կարծում են), այլ դա համաշխարհային համակարգն է՝ հոգևոր Բարելոնը, որի մեջ կան Հին Բարելոնի առանձնահատկությունների մեծամասնությունը: Այս համակարգի դեկավարը լինելու է համաշխարհային բռնապետը, որը մեզ ներկայացված է որպես առաջին գաղան (հմմտ. Հայտ. 13), և նա զահ է բարձրանալու յոթ բլուրների վրա կառուցված ապագա Հռոմ քաղաքում: Հենց այս գաղանն է, ով, ի վերջո, սատանայի և մյուս գաղանի (կեղծ մարգարեի) և աշխարհի բոլոր բանակների օգնությամբ ձգտելու է ոչնչացնել Տեր Հիսուսին՝ Նրա գալստյան ժամանակ: Բայց Տեր Հիսուսը տապալելու է գաղանին. «Տերը պիտի սպասի իր բերնի շնչով» (Բ Թես. 2:8): Եվ նա «կհարվածի ազգերին» (Հայտ. 19:15), գաղանին և կեղծ մարգարեին: Նրանց մասին գրված է. «Ծծմբով վառվող կրակե լճի մեջ զցվեցին» (Հայտ. 19:20): Նա կկապի ու կշարտի սատանային անդունդը, որտեղ նա կմնա 1000 տարի:

Այնուհետև Տեր Հիսուսը կթագավորի երկրի վրա 1000 տարի, որից հետո սատանան կարճ ժամանակով կարձակվի: Մեծ թվով մարդիկ կհետևնեն սատանային ու կշրջապատեն Երուսաղեմը, բայց

ապարդյուն: Կրակ կիշնի երկնքից և կուլ կտա նրանց: Եվ սատանան կնետվի վառվող ծծմբի լիճը, որտեղ նախապես նետվել էին գաղանը և սուտ մարգարեն: Տառապանքը հավերժ կլինի:

Մրանք այն ահռեկի իրադարձություններից են, որոնք շուտով տեղի կունենան երկրի վրա: Բայց նախ կնայենք հոգևոր Բարելոնի անկումից հետո կործանման սարսափելի տեսարանին:

2. Հրեշտակը հայտարարում է Բարելոնի անկումը (18:1-3)

Մեծ իշխանություն ունեցող մի հրեշտակ իշնում է երկնքից ու հզոր ձայնով աղաղակում. «Ընկավ, ընկավ Մեծ Բարելոնը» (Հայտ. 18:2): Երկիրը լուսավորվեց հրեշտակի փառքից՝ իշեցնելով մեզ, որ Աստծո աչքից ոչինչ չկա քարնված (Եբր. 4:13): Եվ չնայած արևը կարող է խավարել մքնուրու նետված ծխից, այնուամենայնիվ, երկնքից այս հրեշտակի փայլը կցրի խավարը և թույլ կտա մարդկանց հրստակ տեսնել Բարելոնի կործանումը:

Վ. Սրորն ենթադրում է, որ այս հրեշտակը գուցե Քրիստոսն է: Նա դա կապում է հրեշտակի ունեցած հսկայական գորության հետ: Այսպիսով, կարող ենք պատկերացնել Քրիստոս Հրեշտակ-Վրիժառուին, որը վրեժ է առնում Բարելոնից: Նախորդ գլոխներում տեսնում ենք Նրան որպես Հրեշտակ-Զահանայի, որը հայտնվում է իր տառապյալ սրբերի անունից (Հայտ. 8:3), և որպես Հրեշտակ-Ազատարարի, որը տիրում է Իր ժառանգությանը (Հայտ. 10:1):

Հրեշտակի հայտարարությունն այստեղ իմշ-որ բանի մասին մարգարենություն չէ, այլ՝ կատարված աստվածային դատաստանի հայտարարություն: Նշենք, որ 18-րդ գլխում ո՞չ գազանի, ո՞չ տասը քաղաքորների, ո՞չ էլ կնոջ մասին խոսք կա: Թվում է, թե Աստված մեզ ցույց է տալիս Բարելոնի վերաբերյալ աստվածային դատաստանի արդյունքը: Նախորդ գլխում գազանը և տասը քաղաքորները կրակով այրում են կնոջը (Հայտ. 17:16), իսկ այս գլխում նա կրակով է սպառվում աստվածային դատաստանի ակտով (Հայտ. 18:8):

Հրեշտակն ասում է. «Դարձավ դևերի կացարան ու բոլոր պիղծ ոգիների արգելանց և վանդակ՝ բոլոր պիղծ ու ատելի բռչունների համար» (Հայտ. 18:2): Բարելոնը դարձավ դևերի բնակարանը և

այն վայրը, որտեղ հաճախում են բոլոր չար հոգիները և բոլոր անմաքուր ու գարշելի թռչունները: Բարեկանը լի է ամեն տեսակի չափությամբ. «Նրա մեղքերը մինչև երկինք են հասել» (Հայտ. 18:5):

Նրա մեղքերից մի քանիսն այն են, որ նա հեռացրեց երկրի ազգերին և երկրի քաղաքորներին ճշմարիտ Աստծուց ու ստիպեց նրանց երկրպագել կեղծ աստծուն, կեղծ Քրիստոսին և նյութապաշտությանը՝ ընդունելով ամեն տեսակ չար վարդապետություն: Քրիստոնյաների հալածանքն ու սպանությունը համարվում է Աստծուն մատուցված ծառայություն, ինչպես որ Տեր Հիսուսն է ասել. «Ժամանակը գալիս է, որ ով ձեզ սպանի, պիտի կարծի, թե Աստծուն ծառայություն է մատուցանում» (Հովհ. 16:2): Իսկ Բարեկանը դարձել է ամենամեծ առևտրական ուժը, որը վերահսկում է համաշխարհային շուկաները (հմնտ. Հայտ. 18:11-13): Որտե՞ղ է Աստծո սերը այս բոլոր գործողություններում: Որտե՞ղ է մաքուր և անբիծ կրոնը (հմնտ. Հակ. 1:27):

3. Երկնքից մի ուրիշ ձայն է խոսում (18:4-8)

Հայտնության գրքում չորս դեպք կա, որտեղ կարդում ենք Երկնքից եկած ձայնի մասին (Հայտ. 10:4, 11:12, 14:13, 18:4): Միշտ չէ, որ պարզ է, թե ով է խոսողը, քայլ մեր նախորդ հատվածում դա կարող է լինել միայն Ինքը՝ Տեր Հիսուսը, քանի որ Նա դիմում է այդ օրվա հավատացյալներին: Նա ասում է. «Դուքս եկեք նրա մեջից, ի՞մ ժողովուրդ...»: Հրեշտակը չէր ասի նման քան:

Այս կոչը հրատապ է: Դուքս գալու երկու պատճառ է բերվում.

(1) «Որ չառնչվեք նրա մեղքերին»: Սա մեզ հիշեցնում է ԲԿորնք. 6:14, 17-ը, որտեղ Պողոս առաքյալն ասում է. «Անհավատների հետ անհավասար լծակից մի՛ եղեք... Դուքս եկեք նրանց միջից և առանձ-նացեք»:

(2) «Նրա պատուհասներից բաժին չստանաք»: Այս պատուհասները թափվելու են Բարեկանի վրա՝ մահ, սուզ և սով, որին կհաջորդի սպառող կրակը (Հայտ. 18:8):

Հստակ զուգահեռ կա Բարեկանի աշտարակի (Ծննդ. 11) և այն բանի միջև, ինչ կարող ենք անվանել մեղքերի աշտարակ (հմր 5): Նոյն հետնորդներն ասացին. «Եկեք մեզ համար մի քաղաք շինենք և մի

աշտարակ, որի գագաթը մինչև երկինք հասնի» (Ծննդ. 11:4): Նրանք մտադիր էին բնակություն հաստատել հենց այնտեղ, որտեղ նրանք էին և ապրել առանց Աստծո: Բայց կարդում ենք. «Տերը նրանց այնտեղից ցրեց ամբողջ երկրի երեսով մեկ, և դադարեցրին քաղաքը կառուցել» (Ծննդ. 11:8): Բարելոնիան աշտարակը մարդկանց անմտության հուշարձանն էր՝ Աստծո դեմ կանգնելու հարցում:

Այժմ ունենք մեղքերի աշտարակը, քանի որ կարդում ենք, որ «նրա [Բարելոնի] մեղքերը մինչև երկինք են հասել»: Դա ոչ այնքան նրա հիմարության հուշարձանն է, որքան նրա հավերժական ամորթի հուշարձանը: Նրա մեղքերն այնքան շատ են և այնքան ուժեղ, որ Աստված պետք է իր բարկությունը թափի նրա վրա: Այնուհետև 7-րդ համարում տեսնում ենք, որ նա անհնազանդ մնաց մինչև վերջ. նրա սրտում ապաշխարության նշոյլ չեղավ: Նա ասում է. «Ես թագուհի եմ նստած, ես որբեայրի չեմ ու ոչ մի սուզ պիտի չտեսնեմ»: Սա մեզ հիշեցնում է հետևյալ առակը. «Կործանման առջևից հպարտությունն է գնում, իսկ անկման առջևից՝ ամբարտավան հոգին» (Առակ. 16:18):

Դատաստանը հզոր է և արագահաս: «Այդ պատճառով մեկ օրվա մեջ գալու են նրա պատուհասները՝ մահ ու սուզ, սով, և կրակով լրիվ պիտի այրվի, որովհետև հզոր է Տեր Աստվածը, որ նրան դատեց» (Հայտ. 18:8): Վկաների աշքում դատաստան իսկապես արագ եղավ: Նրանք Բարելոնի կործանումը չափում են ընդամենը մեկ ժամով (Հայտ. 18:10, 17, 19):

QMBC պանորամա
(Ծարունակելի)

«Ճշմարիտ է այս խոսքը, որ՝ «Եթե Նրա հետ մեռած լինենք, Նրա հետ էլ պիտի ապրենք: Եթե տառապենք, Նրա հետ էլ պիտի թագավորենք: Եթե ուրանանք՝ Նա էլ մեզ կուրանա. Եթե մենք անհավատարիմ ենք, Նա հավատարիմ կմնա. Նա չի կարող ինքն իրեն ուրանալ»:

Բ Տիմ. 2:11-13

ճշմարիտ Սուրբ Ծնունդ.

զոհաբերություն և տոնակատարություն

Sարեդարձի տոնակատարության ժամանակ մենք նշում ենք հոբելյարի կյանքը: Բայց ինչ, եթե վերջինս ներկա չինի տոնակատարությանը: Չատ ամոքալի կլինի, այնպես չէ՞: Սովորաբար Սուրբ Ծնունդը նշում ենք ընտանիքի անդամների և ընկերների հետ: Սակայն Սուրբ Ծնունդը միայն տոնակատարություն չէ: ‘Դրա մեջ մըտնում են նաև շատ զրոյություններ, քանի որ Զրիստոսի՝ աշխարհ գալու մեջ ներառված է զրոյությունը: Զոհաբերել նշանակում է՝ պատրաստակամորեն իրաժարվել ինչ-որ բանից հանուն ավելի լավ քանի: Այս հոդվածը դոկտ. Խավիեր Լակչմանի սերտած այս թեմայի ամփոփագիրն է:

Սուրբ Ծննդյան շրջանը պարզապես տոնակատարություններ, ուտելիքներ, խմիչքներ, զարդարանքներ, Սանտա Կլաուսներ, նվերներ կամ մատքանքներ չեն: Սրանք Սուրբննդյան տոնակատարության մաս են կազմում, որոնք ճշմարիտ Սուրբ Ծնունդի արդյունքն են: Բայց առանց Հորելյարի (Հիսուս Զրիստոսի) Սուրբ Ծնունդը նշելը ամորթալի ու ողբերգական է:

Առաջին Սուրբ Ծնունդը

Առաջին Սուրբ Ծնունդը մեծ շուրջով կատարվեց: Երբ հովիվներին հայտնեցին Հիսուս մասուկի մասին բարի լուրը, իրեշտակները փառաբնեցին Աստծուն՝ երգելով. «Քարձունքներում Աստծուն փառը» (Ղուկ. 2:14-18): Իսկ հովիվները շատ ոգևորվեցին, եթե տեսան մասուկ Հիսուսին:

Իսկ Մարիամի ընտանիքը: Գուցե իրենց ամորթի պատճառով նրանք չնշեցին Հիսուսի ծնունդը: Չէ՞ որ նրա հղիությունը հայտնի կլիներ տեղական համայնքում, եթե նշեին: Ոչ ոք չէր հավատա, որ նա որովայնում կրում է սուրբ Մանուկին: Նույնիսկ իր նշանած Հովսեփը ծրագրել էր գաղտնի բաժանվել նրանից (Մատթ. 1:18-25): Բայց նա

փոխեց իր միտքը, երբ հրեշտակն ասաց իրեն, որ Հիսուսն իսկապես սուրբ Մանուկ է:

Արդյո՞ք Աստված նշեց առաջին Սուրբ Ծնունդը: Հավանաբար, ո՞չ: Սա մարդկության պատմության մեջ այն պահն էր, երբ Աստված Իր Որդուն աշխարհ ուղարկեց, որպեսզի մեղավոր մարդկանց հետ մնա: Այսպիսով, Ետևաբեմում նշմարում ենք առաջին Սուրբ Ծնունդի գոհարերական կողմը:

Սուրբ Ծնունդն Աստծո գաղափարն էր

Հիսուսը Նիկողեմոսին սովորեցրեց. «Որովհետև Աստված այսպես սիրեց աշխարհը, որ Իր միածին Որդուն տվեց, որ ով Նրան հավատա չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա» (Հովհ. 3:16): Այս համարում չորս կարևոր միտք կա՝ Աստծո սերը, Աստծո տալլը, հավատալու հրավերը և ապրելու հրավերը: Առաջին երկուսը և վերջին երկուսը շաղկապված են: Աստված այնքան սիրեց, որ տվեց: Աստծո համար սիրել նշանակում է՝ տալ: Նա տվեց լավագույնը, որ կարող էր տալ, այսինքն՝ Ինքնիրեն: Այնուհետև ասաց. «Ով Նրան հավատա...»: Տեր Հիսուսը Նիկողեմոսին հորդորում է հավատալ, որ Ինքն Աստծո Որդին է, որպեսզի կորսայան փոխարեն հավիտենական կյանք ունենա: Տալլ միշտ գոհարերական է, մինչդեռ ստանալլ՝ (այս պարագայում՝ հավիտենական կյանք ստանալլ) տոնելու առիք:

Սուրբ Ծնունդին հիշում ենք, որ Աստված Ինքն Իր Անձը տվեց, ինչը գոհարերություն է: Հիսուսին երկիր ուղարկելն Աստծո գաղափարն էր: Այս առունով Աստված հիմնեց Սուրբ Ծնունդը: Եվ Աստծո պարզելը ստանալլ (ներումը, սերը, ուրախությունը, խաղաղությունը և հավիտենական կյանքը՝ Հիսուսի միջոցով), տոնելու առիք է:

Եկեք դիտարկենք չորս բան, որոնք Աստված գոհարերեց առաջին Սուրբ Ծնունդին, որպեսզի կարողանանք ճիշտ տոնել այն:

Աստծո փառքի գոհարերությունը

Իր մահապատժի նախորդ գիշերը Հիսուսն աղոքեց Հայր Աստծուն՝ ասելով. «Եվ իիմա, ո՞վ Հայր, Քեզանով փառավորիր Ինձ՝ այն փառ-

քով, որ Ես ունեի Քեզ հետ՝ աշխարհի լինելուց առաջ» (Հովհ. 17:5): Նախքան աշխարհ գալը, Քրիստոսն ապրում էր Երկնքում Հայր Աստծո հետ: Նա ուներ աստվածության փառքն ու շքեղությունը: Բայց առաջին Սուրբ Ծննդյան Հիսուսը քողարկեց Իր փառքը: Այն անտեսանելի էր: Հովհ. 17-րդ գլխում Հիսուսն աղոթում է, որ Իր տեսանելի փառքը վերականգնվի Երկնքում:

Պողոսը բացատրում է, թե ինչու Հիսուսը զոհաբերեց Իր փառքը. «Որ կարողանա հայտնել Իր փառքի մեծությունը ողորմության անորների հանդեպ, որոնց նախապես պատրաստեց փառքի համար, նույնիսկ մեզ, որոնց կամչեց, ոչ միայն իրեաներից, այլ նաև՝ հեթանոսների միջից» (Հոռմ. 9:23-24): Աստված որոշ մարդկանց պատրաստում է փառքի համար: Հիսուսը պետք է զոհաբերեր Իր փառքը առաջին Սուրբ Ծննդյան, որպեսզի մենք կարողանայինք վերականգնել մեր փառքը (որը կորսվեց Ադամի ու Եվայի ձեռքով Եղեմի պարտեզում)` վստահելով Հիսուս Քրիստոսին:

Առաջին Սուրբ Ծննդյան Աստված ոչ միայն զոհաբերեց Իր փառքը, այլև՝ Իր հարստությունը:

Աստծո հարստության զոհաբերությունը

Պողոսը ստորագրեց, որ Հիսուսն առատաձեռնության ամենամեծ օրինակն է. «Որովհետև դուք զիտեք մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը, թե Նա, որ հարուստ էր, աղքատացավ ձեզ համար, որ դուք Նրա աղքատանալով հարստանաք» (ԲԿորնթ. 8:9): Հիսուսը չափազանց հարուստ է, քանի որ Աստված է: Բայց առաջին Սուրբ Ծննդյան Նա աղքատացավ: Այսպիսով Նա հարստությունից իրաժարվեց ու աղքատությունը հագավ: Հիսուսը իրաժարվեց ամեն ինչից, որպեսզի մեզ նման աղքատ մեղավորները, ովքեր Աստծո դատաստանի տակ էին, կարողանային հարստանալ Իրենով: Մենք «հարուստ ենք» Քրիստոսով:

Մենք չենք կարող Սուրբ Ծննդյան հասկանալ առանց խաչելության և հարության, քանի որ մարդեղացումը (Քրիստոսի ծննդյանը) խաչելության միջոցով դարձավ փրկարար իրադարձություն:

Առաջին Սուրբ Ծնունդին Աստված ոչ միայն զոհաբերեց Իր փառքն ու հարստությունը, այլև՝ Իր կյանքը:

Աստծո կյանքի զոհաբերությունը

Հիսուսն ասաց. «Որովհետև նույնիսկ Մարդու Որդին չեկավ ծառայություն ընդունելու, այլ՝ ծառայելու և Իր Անձը որպես փրկագին շատերի համար տալու» (Մարկ. 10:45):

Երբ Հիսուսը որպես մանուկ ծնվեց առաջին Սուրբ Ծնունդին, Նա եկավ՝ զոհաբերելու Իր կյանքը: Այսպիսով, Սուրբ Ծնունդը արժեցավ Աստծո կյանքը: Ինչո՞ւ: Որպեսզի մենք կարողանամք ունենալ Նրա կյանքը: Հիսուսն ասաց. «Ես եկա, որ նրանք կյանք ունենան, և որ այն ավելի առատորեն ունենան» (Հովհ. 10:10): Այստեղ հիշատակված «կյանքը» հոգևոր կյանքն է: Այս կյանքը տրվեց մեզ Աստծո կողմից՝ Հիսուս Քրիստոսին վստահելու միջոցով (Հովհ. 5:39-40, ԱՀովհ. 5:11-12): Քանի որ ունենք հոգևոր կյանք, կարող ենք տոնել Սուրբ Ծնունդը՝ ուրախանալով Հիսուսով, ով հոգևոր կյանքի աղբյուրն է: Ինչպես տեսանք Հովհ. 3:16-ում, Նա սիրում է տալը, և մենք հավատում ենք, որպեսզի ապրենք (հոգևորապես): Բայց եթե հոգևորապես մեռած ենք, մեր Սուրբ Ծնունդն անհմաստ է:

Ամփոփում

Ճշմարիտ Սուրբ Ծնունդը պարզապես տոնակատարության ժամանակ չէ: Այն ավելին է, քան տոնակատարությունը:

Սուրբ Ծնունդի ժամանակ.

- Խորիրդածում ենք Աստծո զոհաբերության շուրջ (այն, ինչ Նա կատարեց մեզ համար),
- Պավանում ենք Հիսուսին՝ մեր Փրկչին,
- միավորվում ենք Քրիստոսի հետ (Նա Աստծո սուրբծննդյան նվերն է մեզ),
- ուրախանում ենք ու ցնծում:

Եկե՛ք իմաստալից կերպով տոնենք Սուրբ Ծնունդը՝ հիշելով Աստծո զոհաբերությունները: Սուրբ Ծնունդը զոհաբերություն է և Աստ-

ծո փառքի տոնակատարությունն է: Սուրբ Ծնունդն Աստծո հարստության զոհաբերության տոնն է: Սուրբ Ծնունդն Աստծո բնության զոհաբերության տոնն է: Սուրբ Ծնունդն Աստծո կյանքի զոհաբերության տոնն է: Եկե՛ք պատրաստ լինենք զոհաբերվելու որիշների համար, ինչպես Աստված զոհաբերվեց մեզ համար:

Զորջ հառություն

Մարզումների ստուգաթերթիկ

«Ուստի, մենք Էլ, տեսնելով որ շրջապատված ենք վկաների բազմության այսպիսի մեծ ամպով, դե՛ն նետենք ամեն մի ծանրություն և մեզ հեշտությամբ բակարդ գցող մեղքը ու համբերատարությամբ վագենք մեր առջև դրված մրցավազքը» (Երր. 12:1):

«Եղբայրներ, ես չեմ համարում, թե արդեն հասել եմ, բայց այս մի բանն անում եմ, որ ետևում մնացածները մոռացած՝ առջևում եղածներին եմ ձգտում: ‘Դեպի նպատակակետն եմ վազում՝ Հիսուս Քրիստոսվ Աստծո բարձր կոչման մրցանակի համար» (Փիլիպ. 3:13-14):

Մարաքոնյան աշխարհի չեմպիոնն ուներ մի պարզ կանոն՝ «Երբեք, երբեք, երբեք չհանձնվել»: Մրցավազքն ավարտելու նրա պողպատե վճռականությունը նաև նշանակում էր, որ նա շատ երկար ժամեր հատկացնում էր մարզումներին:

Արդյոք կհամարձակվեի՞նք պատկերացնել, որ առանց անձնական կարգապահության և մարզումների կարող ենք հայթահարել յուրաքանչյուր խոչընդոտ և լավ ավարտել մեր հոգևոր մրցավազքը: Անշուշտ, ո՞չ:

Դուք քրիստոնյա՞ն եք, փրկվե՞լ եք Տեր Հիսուսի արյունով: Դե ուղեմն, մի պահ ուսումնասիրեք այս «Մարզումների ստուգաթերթիկը»:

❑ Իմ սրտում որոշել եմ հետևել Տեր Հիսուս Քրիստոսին կյանքի մնացած օրերի ընթացքում:

Մարգումը սկսվում է սրտում: Մենք կարող ենք շատ քուլություններ ու վախեր ունենալ, բայց եթե փափագում ենք մեր կյանքում Աստծուն փառարանել, ապա Տերը անշուշտ կարող է օգտագործել մեզ (Առակ. 4:23):

❑ Հաշվի առել եմ Քրիստոսին հետևելու գինը և պատրաստ եմ վճարել այն (Աստծո օգնությամբ):

Տեր Հիսուսը սովորեցրեց մեզ հաշվի առնել գինը (Ղուկ. 14:25-33): Մենք գտնվում ենք նեղ և դժվար ճանապարհին, որը տանում է դեպի կյանք, այլ ոչ թե դեպի կործանում (Մատթ. 7:13-14):

❑ Յուրաքանչյուր հնարավորություն օգտագործում եմ Սուրբ Գրքից և ուրիշներից սովորելու համար:

Տիրոջ խորհուրդները մեր խորհուրդները չեն (Եսայի 55:8-9), և մենք Նրա մտքի և իմաստության կարիքն ունենք: Մենք պետք ենք ճեղնամուխ լինենք ինքներս մեզ երկնային ճանապարհով դաստիարակելու գործին:

❑ Սովորում եմ թույլ տալ Աստծուն քննել իմ սիրտը և առաջնորդել իմ ճանապարհները:

Խոսրի սերմը պետք է խոր արմատներ օգի մեր սրտերում (Մատթ. 13:20-21): Առանց ապաշխարության և խոնարհության անշուշտ կմոլորվենք:

❑ Զգտում եմ միշտ մաքուր խղճով ապրել Աստծոն և մարդկանց առջև:

Սա Պողոսի կյանքի կանոններից մեկն էր (Գործ 24:16): Եթե ազատություն տանք պղծված խղճին, ապա չենք կարող հաջողության հասնել:

❑ Սովորում եմ և կիրառում եմ ինքնակարգապահություն:

Ինքնակարգապահությունը կամ ինքնատիրապետումը նշանակում է, որ ես ընտրում եմ, թե ինչպես ծախսեմ իմ ժամանակն ու

Էներգիան աստվածահաճո կերպով, այլ ոչ թե բույլ եմ տալիս, որ զգացումները, տրամադրությունը կամ ծովությունը վերահսկեն ինձ:

❑ Սովորում եմ անձնական աղոքքի և ուրիշների համար բարեխսուելու սովորություն ձևակերպել:

Տեր Հիսուսի ուսմունքն ու կյանքը ցույց են տալիս աղոքքի կենսական նշանակությունը:

❑ Սովորում եմ արագ լսել, դանդաղ խոսել և դանդաղ բարկանալ:

Եթե կարողանում ենք կառավարել մեր լեզուն, լավ ենք անում (Հակ. 1:19-20, 3:2): Որքա՞ն մեղք և վիրավորանք է առաջացնում անսանձ լեզուն:

❑ Սովորում եմ Աստծո Խոսքով դատել իմ ամբողջ կյանքը (տանը և դրասում):

Եթե սովորենք ապրել Հոգով տանը, ապա մեր կյանքի մյուս ոլորտներում հաղթանակը համեմատաբար հեշտ կլինի:

❑ Օգտագործում եմ յուրաքանչյուր հնարավորություն՝ օգնելու, ծառայելու և խրախուսելու ուրիշներին նոր կյանքում:

Մենք օրինություն ենք ուրիշների համար, երբ ծառայում ենք Տիրոջը և Նրա ժողովրդին, և սրբագործում ենք այդ ծառայության մեջ ու միջոցով:

«Տե՛ր, մենք ո՞ւմ գնանք. Դու հավիտենական կյանքի խոսքերն ունես» (Հովհ. 6:68):

Նեյլ Բուքման



Խնդրեցե՛ք հնձի Տիրոջը, որ մշակներ ուղարկի իր հնձի համար

Ղուկ. 10:1-3

Տեր Հիսուսն իր ծառայությունն սկսեց 12 աշակերտով, այնուհետև տև տեսնում ենք, որ այդ թիվը հասավ 70-ի, իր մահից հետո վերնատանը՝ 120-ի, իսկ հարությունից հետո՝ 500-ից ավելիի: Այսօր Քրիստոսն ունի միլիոնավոր հետևորդներ աշխարհի բոլոր ազգերի մեջ, բոլոր երկրներում:

Ինչո՞ւ այսքան հետևորդ: Քանի որ հունձը շատ է, բայց մշակները՝ քիչ:

Որո՞մի առակի մեկնության մեջ Տեր Հիսուսը հստակեցնում է, որ հունձը Աշխարհի վերջն է, իսկ հնձողները՝ հրեշտակները: Սակայն վերոհիշյալ սուրբգորային հատվածում հունձը աշխարհի վերջը չէ, և հնձողներ չկան, այլ՝ մշակներ:

Տարբերություն կա այս երկուսի միջև: Մշակն ու հնձողը նույնը չեն: Նրանք նույն գործառույթը չեն կատարում: Մշակը հողի մասին հոգ տանողն է, ջրողն է, հիվանդություններից և միջատներից պաշտպանողն է: Մշակի ծեռքում մանգաղ չկա, իսկ հնձողի ծեռքում՝ կա: Հնձողի գործը հողը մշակելը չէ, այլ հնձելն է:

Տերն ասաց. «Խնդրեցե՛ք հնձի Տիրոջը, որ մշակներ ուղարկի իր հնձի համար»: Չասաց. «Խնդրեցե՛ք, որ հնձողները ուղարկի»: Նրանք արդեն կան, պատրաստ են, հրամանի են սպասում, ինչպես կարդում ենք Հայտ. 14:17-19-ում: Հնձողները կան, նրանք քիչ չեն, բայց մշակները քիչ են:

Ղուկ. 10:1-3-ում Հիսուսը ուրիշ 70 աշակերտ ընտրեց ու նրանց զույգ-զույգ ուղարկեց: Հիսուսը նաև 12-ին ուղարկեց և նրանց նույնապես ասաց այս խոսքերը (Մատթ. 9:37-38, 10:7-9):

Ղուկ. 10:1-3-ում երկու պատկեր է նկարագրված:

Ա. Հունձը և մշակը – հողագործությունից վերցված օրինակ:

Բ. Գայլը և գառը - կենդանական աշխարհից վերցված օրինակ:

Առաջինը բնական, սովորական ու տրամբանական է: Հունար և մշակին կարելի է կողք կողքի դնել, բայց երկրորդը անսովոր է. գայլին ու գառին կողք կողքի հեշտ չէ պատկերացնել: Սակայն Հիսուսի խոսքերից պարզ է դառնում, որ հունար չէ, որ պետք է գնա մշակի մոտ, ոչ էլ գայլը՝ գառան մոտ: Մշակը պետք է գնա հունարի մոտ, և գառը պետք է գնա գայլի մոտ կամ գայլերի մեջ:

Սա միակ հատվածը չէ, որտեղ Հիսուսն Իր հետևորդներին ուղարկում է գայլերի մեջ, որպես գառնուկներ կամ ոչխարներ: Կարդացեք Մատթ. 10:16-ը. Տերն Իր տասներկու աշակերտներին ուղարկեց՝ ասելով. «Ահա, Ես ճեզ ուղարկում եմ որպես գառներ՝ գայլերի մեջ, որինն, օձերի նման իմաստո՞ւն եղեք և աղավնիների նման՝ անվնաս»:

Ո՞ւմ նկատի ուներ Հիսուսը՝ գայլեր ասելով: Շատերս միանգամից կմտածենք թշնամի երկրի մասին: Ո՞չ, Հիսուսն այս խոսքն ասելիս Իր աշակերտներին չուղարկեց Հռոմ, Ասորեստան կամ հեթանոսական մեկ այլ երկիր: Մատթ. 10:5-6-ի տասներկուսին Նա ասաց. «Հեթանոսների ճանապարհով չզնաք և սամարացիների քաղաքը չմրտնեք, այլ զնացեք՝ Խրայելի տան կորած ոչխարների ետևից»: 12-ին սամարացիների քաղաք չուղարկեց, բայց Ղուկասի Ավետարանի ընթերցված հատվածում՝ սամարացիների մոտ ուղարկեց:

Մենք նաև գիտենք, որ Հիսուսն Իր ծառայությունը սկսեց Խրայելում և Խրայելից դուրս չեկավ: Նա ասաց. «Ես ուրիշի չուղարկվեցի, այլ՝ Խրայելի տան կորած ոչխարներին» (Մատթ. 15:24):

Ուրեմն վայրը ֆիքսենք՝ Խրայելն էր: Եթե Խրայելն է վայրը, ուրեմն գայլերը հրեաներն են, իսկ ավելի կոմմենտ՝ հրեա ժողովրդի առաջնորդները: Թե՛ յոթանասունին և թե՛ տասներկուսին ուղարկելիս Հիսուսի խոսքերը գրեթե համընկնում են: Այնտեղ մի միտք կա, որը խոսում է ատյանների, քազավորների և կուսակալների առջև կանգնելու, ժողովարաններում ծեծվելու մասին... Այս բոլորն անելու իշխանությունը, զորությունը կամ հոգևոր առաջնորդների, կամ էլ ազգի առաջնորդների ձեռքում է:

Սիշտ այն թյուրըմբռնումը կա, որ Հիսուսը գառնուկներին ուղարկեց գայլերի մոտ: Ո՛չ, Հիսուսը գառնուկներին ուղարկեց գայլերի մեջ, քայլ ոչ գայլերին: Որպես Բարի Հովիվ, որպես Սաղմոս 23-ի Հովիվը, անհնար է, որ Հիսուսն Իր գառնուկներին չպաշտպանի գայլերից, վտանգներից և անհնար է, որ Նա Իր գառնուկներին ուղարկի սպանդի:

Նա նրանց ուղարկեց գայլերի մեջ, քայլ ոչ թե գայլերին, այլ՝ կորած ոչխարներին: Մեկ այլ խոսքով՝ գայլերի քքի տակ հասնել ոչխարներին: Մի անգամ ևս կարդանք համարները, որպեսզի համոզվենք.

«Հեքանոսների ճանապարհով չգնա՞ք և սամարացիների քաղաքը շմտնե՞ք, այլ գնացե՞ք Խրայելի տան կորած ոչխարների ետևից»:

«Ահա, Ես ձեզ ուղարկում եմ որպես գառներ՝ գայլերի մեջ, ուրեմն, օձերի նման իմաստուն եղեք և աղավնիների նման՝ անվնաս»:

«Գնացե՞ք, ահա Ես ձեզ ուղարկում եմ՝ որպես գառներ գայլերի մեջ»:

Գայլերի քքի տակ հասնել ոչխարներին: Վտանգը հաշվի առած՝ հասնել կորած ու մոլորված հոգիներին: Ինչո՞ւ: Քանի որ Հիսուսը խղճում է: Կարդացե՞ք Մատթ. 9:36-38-ը:

Այդ ժամանակաշրջանում իրեա ժողովուրդը հոգնած, ցրված, կրոնական, կուսակցական և այլ հոսանքներից քշված հովիվ չունեցող ոչխարների պես էր: Նրանք մոլորված ու շփորփած էին թե՛ հոգևոր, թե՛ ազգային հարցերում:

Որքան նման է այսօրվա իրավիճակին: Այսօր շատ ազգեր, ներառյալ հայերս շփորփած ու մոլորված ենք, հոգնած ու տառապած ենք և կարիք ունենք Փրկչի, մեր հոգիների մեծ Հովիվ:

Հունձը շատ է, մոլորվածներն ու շփորփածները շատ են. պաշտպանության, առաջնորդության, խնամակալության և բժշկության կարիք կա ամենուր:

Ի՞նչ անենք: Աղոթենք, որ Տերը մշակներ հանի: Սա թերի պատասխան է: Սուրբգրային հատվածն ի՞նչ էր ասում: Այնտեղ գրված

է, որ Հիսուսը նախ ուղարկեց մշակներին, այնուհետև ասաց, որ խնդրեն հունածի Տիրոջը նոր մշակներ հանել:

Մենք առաջին բաժինը միշտ բաց ենք թողնում: Ասում ենք՝ աղոթենք, որ մշակներ դուրս գան: Գուցե ե՞ս եմ այդ մշակը, կամ դո՞ւ ես այդ մշակը: Մեր հայրենակիցներն Աստծո Խոսքի, Ավետարանի լույսի, Ավետարանի պաշտպանության, հոգևոր առաջնորդության, խնամակալության և բժշկության կարիք ունեն հիմա առավել, քան երբեւ:

Հոգևոր պարզեներդ զննիր: Ինչո՞վ կարող ես օգտակար լինել: Երեք պարզեների ուշադրություն դարձրու: Եթե սրանցից որևէ մեկն ունես, որեմն պատրաստ մշակ ես, իսկ եթե այս երեք պարզեներից որևէ մեկը չունես, որեմն պետք է աղոթես, որ Տերը նման պարզեւա, կամ հոգիներ բերի եկեղեցի, որոնք այդ պարզեներն ունեն:

1. Ավետարանչության պարզեւ
 2. Քաջալերելու/մխիթարելու պարզեւ
 3. Հավատի պարզեւ
- Հայաստանը ավետարանիների կարիք ունի, մարդիկ, որոնք ավետարանչության պարզեւ ունեն, քաջությամբ ու համարձակությամբ, առանց մարդկանցից վախենալու կամ ամաչելու, Քրիստոսի Ավետարանը կհասցնեն մարդկանց: Ավետարանելը հոգևոր պարզեւ է, և մենք հիմա մեծ կարիք ունենք ու նաև պարարտ հոդ, որ ավետարանիներ դուրս գան ու ժողովրդին ապաշխարությամբ դեպի Քրիստոսն առաջնորդեն:
 - Քաջալերելու կամ մխիթարելու պարզեւ: Ես ճանաչում եմ Աստծո զավակների, որոնց հետ 1-2 րոպե անցկացնելը բավարար է, որ քաջալերվեն ու մխիթարվեն կորստիս, կամ ցավիս համար: Նաև հավատացյալներ գիտեն, որոնք 1-2 ժամ կարող են խոսել, բայց ինձ չմխիթարել, ինչպես Հոքի ընկերները: Մեր ազգը սրա կարիքն ունի: Եթե ունես այդ պարզեւ, գործածիր այն, մխիթարիր, քաջալերիր, հուսահատությունից դո՛րս հանիր, հույս ու վստահություն ներշնչիր Աստծո նկատմամբ:

- Հավատի պարզն: Հավատը պարզն է. «Մեկին Հոգուց տըր-ված է իմաստության խոսք, մեկ ուրիշին՝ գիտության խոսք նույն Հոգով, մյուսին՝ հավատ նույն Հոգով, ուրիշին՝ բժշկության պարզներ նույն Հոգով»: Հավատը դրական լավատեսությունը չէ, այն ինքնախաքեռություն չէ, որ ամեն ինչ լավ է լինելու... Հավատով անձը վստահ գիտի, որ ամեն բաները բարուն գործակից են լինելու, նրանց համար, ովքեր սիրում են Աստծուն:

Որքան լավ կլիներ, եթե եկեղեցում գտնվեին այսպիսի մարդիկ, որոնք ավետարանչության բեռ ունեն, որոնք մխիթարության և քաջալերության խոսք ունեն, որոնք հավատ ունեն, որը վարակում է իրենց կողքիններին:

Հիսուսն ասաց. «Խնդրեցե՛ք հնձի Տիրոջը, որ մշակներ ուղարկի իր հնձի համար: Գնացե՛ք, ահա Ես ձեզ ուղարկում եմ՝ որպես զառներ գայլերի մեջ»:

Վարդան Սարգսիսյան

*Ավագանելիք, Անդրեանի Միացյալ Նոտարականություն, Հայության և
Կրթության ACM-ի բարեկարգության շնորհակալություն և Առաջ Ծնունդի և
օրինակ նոր քառորդ տեղ նայության բայցուրից:*